## Տ. ՄԻՔԱՅԵԼ ԱԲԵՂԱ ԱՋԱՊԱՀՅԱՆ



Ծնվել է 1963 թ. դեկտեմբերի 27-ին, Լենինական քաղաքում։

1971—1981 թթ. սովորել և ավարտել է տեղի Գաբրիել Սունդուկյանի անվան հմր. 20 անգլերեն լեզվի թեքումով միջնակարգ դպրոցը։

1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգեվոր ճեմարան։

1982—84 թթ. ծառայել է սովետական բանակում։

Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում։

1987 թ. դեկտեմբերի 25-ին, Ստեփանոս Նախավկայի տոնի օրը, ձեռնադրվել է սարկավագ։

1988 թ. մարտի 10-ին, «Պետրոս Բերդումյան. կյանքը, գործը և «Մեկնութիւն Յոբայ» աշխատությունը» թեմայով պաշտպանել է ավարտաճառ և արժանացել գերազանց գնահատականի։

Այժմ աշխատանքի է նշանակված Մայր տաճարում, որպես փոխլուսարարապետ։